

ՎԻՆԿ ԶԱՔԱՐՅԱՆ

ՀԱՅ ԳՐԻ ՈՒ ԴՊՐՈՒԹՅԱՆ 1600-ԱՄՅԱ ՍՐԲԱԶԱՆ
ՀՈՐԵԼՅԱՆԻ ԱՌԹՎ

«ՀԱՅՈՑ ՄԱՏԵՆԱԳԻՐՆԵՐ» ՆՈՐ ՄԱՏԵՆԱՇԱՐԸ
(Լսեն-խոհագրություն)

Ազգաշեն գործ է ձեռնարկել «Հայաստան» հրատարակչությունը՝ հիմք դնելով «Հայոց մատենագիրներ» նոր մատենաշարին: Այն նվիրվում է Հայաստանում ֆրիստոնեությունը պետական կրոն ընդունելու 1700 և հայ գրի ու դպրության 1600-ամյա սրբազան հոբելյաններին:

Հրատարակչությունը նպատակ ունի լույս ընծայել հայ գրականության տարաբնույթ բոլոր հուշարձանները, սկսած և դարից, ներառյալ ԺԸ դարը: Հիշյալ շարքում լինելու է այդ ժամանակաշրջանի ամբողջ հայ մատենագրությունը: Պետք է հրատարակվեն ինչպես առանձին գրական հուշարձաններ, այնպես էլ տարբեր հեղինակների ստեղծագործությունների, նույնաբնույթ նյութերի ժողովածուներ, ինչպես «Կանոնագիրք հայոց»-ը, «Գիրք թղթոց»-ը և այլն: Այս շնորհակալ գործում ընդգրկվելու են բազմաեմուտ պատմարան և բանասեր գիտնականներ, նրանց միջոցով կատարելագործվեն և՛ հրատարակչության գիտական սկզբունքները, և՛ մնացյալ աշխատանքները:

Նախատեսվում է ընթերցողի սեղանին դնել այնպիսի հատորներ, որոնք բավարարեն և՛ գիտնական մասնագետներին, և՛ ուսանողության ու լայն հասարակայնության հետաքրքրություններն ու պահանջմունքները: Յուրաքանչյուր հատոր, ընկած է, կունենա համապատասխան գիտական մասնաբաժին, որի մեջ կներառվեն ցայսօր եղած հայագիտության նվաճումները: Հրատարակվելու են բոլոր այն գիտական-գեղարվեստական և պատմագրական ներկերը՝ աշխարհաբար թարգմանությամբ, որոնք կրոնեն մեր ժամանակի հայագիտական մտքի ֆեոնությունը, իսկ այն գործերը, որոնք չեն բավարարի այդ պահանջները, կներկայացվեն նոր թարգմանությամբ (իսկ առհասարակ, ըստ մեծի մասի, պետք է ընագրերը պատրաստվեն նորովի և կատարվեն նոր թարգմանություններ): Կարն ասած, ներկայացվելու է ամբողջ հայ մատենագիտությունը՝ իր ամբողջության մեջ:

Նվ ահա մենք ունենք մեծ ավետիս, արդեն լույս է տեսել մատենաշարի առաջինը՝ Կորյունի «Վարդ Մեսրոպ Մաշտոցի» երկը, աշխատասիրությամբ վաստակյալ ձեռագրագետ Արտաշես Մաթևոսյանի:

Կորյունի Մատյանը, ըստ էության, նրա ապրած օրերից հետո ստեղծված հայոց «Ոսկեդարյան» հուշակված գրականության գոհարներից է: Կորյունի այս երկը գրվել է 443-ին: Բացի այն, որ հրատարակչությունը սույն մատենաշարի համար ազդարարում է, թե այն նվիրվում է Հայաստանում ֆրիստոնեության պետական կրոն ընդունելու 1700-ամյա, որ լրանում է 2001 թվականին, և 2005 թվականին լրացող հայ գրի ու դպրության ստեղծման 1600-ամյա հոբելյաններին, Մատյանին կցված իր հեղինակած նախագրում ձեռագրագետ Արտաշես

Մաթևոսյանը շեշտում է, որ այն նվիրվում է նաև Կորյունի երկի ստեղծման 1550-ամյակին:

Առհասարակ եռերկյանները ոչ միայն տոնական իրադարձություններ են, այլև մի անգամ ևս հավաստում են ու հաստատում տվյալ երևույթի պատմական մեծ դերն ու նշանակությունը:

Կորյունի «Վարժ Մաշտոցի» երկը 1941 թվականին լույս տեսավ պրոֆեսոր Մանուկ Աբեղյանի աշխարհաբար թարգմանությամբ, ծանոթագրություններով, գրաբար բնագրի և ձեռագրական տարբերակների հանդերձ: 1962-ին այն վերահրատարակվեց առանց գրաբար բնագրի և տարբերակների: Այստեղ նորությունն այն էր, որ հավելվել էր նաև Մ. Աբեղյանի «Մեսրոպ Մաշտոցը և հայ գրի ու գրականության սկիզբը» ուսումնասիրությունը: Առանց վերջինիս, Կորյունի Մատյանը լույս ընծայվեց 1971-ին, 1981-ին՝ առանց գրաբար տեխստի և տարբերակների, նաև ռուսերեն և անգլերեն լեզուներով:

Սույն հրատարակությունը ձեռագրագետ Արտաշես Մաթևոսյանի կազմից փաստորեն 1941 թվականին լույս տեսածի վերահրատարակումն է, առանց ձեռագրական տարբերակների: Սակայն ի տարբերություն նախորդների, այստեղ ընդգրկված է նաև Փարիզի Ազգային գրադարանում պահվող գիտական շրջաններում «Փոփր Կորյուն» անվանումով ստացած օրինակը, որի ընդարձակ վերնագիրն է «Ի յիշատակի պատմության վարուց երանելու Սուրբ վարդապետին Մեսրոպայ, գոր ասացեալ է նորին աշակերտի Կորեան»: Իսկ սրա ընդարձակ տարբերակը, որից համառոտվել է «Փոփր Կորյունը» վերնագրված է «Պատմութիւն վարուց և մահուան առն երանելոյն սրբոյն Մեսրոպայ վարդապետի մերայ թարգմանչի ի Կորին վարդապետէ աշակերտէ նորին»: Այս վերջինիս վերծանությունը ձեռագրի մանրածապակների կատարել է Ա. Ս. Մաթևոսյանը, իսկ գրաբարից թարգմանությունը՝ Ա. Ս. Զեյնունյանը:

Սույն գրքում գետնդրվել է նաև Մաշտոցի անվան Մատենադարանում պահվող Տոնականներում եղած Կորյունի Մատյանի ավելի համառոտ օրինակը: Այն կրում է «Ի յիշատակի սրբոյն Մեսրոպայ վարդապետի գոր արարեալ է Կորեան սրբոյ, յաղագս վարուց նորա թէ ուստի էր» վերնագիրը: Սրա վերծանությունը և թարգմանությունը ևս կատարել է Ա. Ս. Մաթևոսյանը: Հիշյալ վերջին տարբերակներն աշխարհաբար թարգմանությունից զատ տրվում են նաև գրաբար բնագրերով: Գրքին կցված է նաև «Հայ գրերի գյուտը և տարածումը» ֆաբրիկը, որն, ի դեպ, նորույթ է նախորդ հրատարակությունների համեմատ: Այն նյութն առավել դյուրընթեռնելի է դարձնում և՛ մասնագետ, և՛ զանգվածային ընթերցողի համար:

Սույն հրատարակության մեջ առկա է ամենագլխավորը: Ի տարբերություն մեզանում և այլուր եղած բոլոր և՛ ձեռագիր, և՛ տպագիր օրինակների, «այստեղ բնագիրը սրբագրված և նշգրտված է ձեռագրերից տպագրին անցած անպատեհ մի թուրիմացությունից ու վրիպումից»¹:

Սիրելի ընթերցող, ուշադրություն դարձրու այն պարագային, թե որքան համեստ է գրում հայագիտության մեջ իր կատարած այս հայտնագործության վերաբերյալ Ա. Ս. Մատևոսյանը. «սրբագրված է», «նշգրտված է»... Բայց չէ՞ որ դա տարիների տառապագին, մեղավաշան աշխատանքի արգասիք է, որ ենթադրում է խորը գիտելիքներ, հայագիտական, ձեռագրագիտական փորձ և հմտություն,

¹ Տե՛ս Կորյուն, Վարժ Մեսրոպ Մաշտոցի, Երևան, «Հայաստան», 1984 թ., Ա. Մաթևոսյան, նախագիր, էջ 7: Հետադարձ մեջբերումները կեղծ են սույն հրատարակությունից:

հավելած նաև տվյալ բնագավառի համար ի վերուստ կոչված լինելու հանգամանքը, կամ այն, ինչ եորջորջվում է ամենափոքր ձիրք. նաև տաղանդ:

Արդ, որն է Արտաշես Մաթևոսյանի կատարած հայտնագործության բուն էությունը:

Հայաճի է, որ ըստ Կորյունի, Մ. Խորենացու և Ղ. Փարպեցու, Մաշտոցը հայոց գրերը ստեղծելու մասին իր վճիռը հայտնեց Սահակ Մեծին: Եվ նրա ուրախությանը չափ չի լինում, երբ պարզվում է, որ Կաթողիկոսն էլ համակարծիք է իրեն: Հետո նրանք երկուսով դիմում են Հայոց արքային՝ Վռամշապուհին: Վերջինս ևս պատրաստակամ է լինում, ասես հենց սպասում էր նման առաջարկի: Այս արքան պատմում է «Դանիել անունով մի ասորի եպիսկոպոսի մասին, որ հանկարծ գտել է հայերեն լեզվի ավարքետներ-նշանագրեր»: Սա արդեն երազածի իրականացում էր, այն էլ առանց տառապանքի: Պետք էր պատկերացնել Սահակին ու Միսրոպին պատած ավիսի երջանկությունը և բերկրանքը: Եվ նրանք արքային խնդրում են նշանագրերը բերել տալ: Դա Վռամշապուհի թագավորության 5-րդ խնդրում են նշանագրերը բերել տալ: Դա արեղյանական (1841 թ.) տեխստի, սկսում են տարում էր: Բերում են: Ըստ արեղյանական (1841 թ.) տեխստի, սկսում են գործածել նշանագրերը: «Ապա երանելի հոգաբարձուները, - կարդում ենք այնտեղ, - իրենց հանկարծագյուտ ուզածն առնելով՝ էլ ի խնդրեցին արքայից մատուղանաս մանուկներ, որոնց միջոցով կարողանային նշանագրերը գործադրել: Եվ երբ նրանցից շատերը սովորեցին, ապա [թագավորը] հրամայեց ամեն տեղ նույն նշանագրերով կրթել, որով և երանելին հասավ նույնիսկ վարդապետական գեղեցիկ աստիճանին և մոտ երկու տարի իր ուսուցչությունն արեց ու նույն նշանագրերով տարավ»²: Այստեղ էականն այն է, որ ամբողջ երկու տարի ուսուցանելուց հետո տեսան և «հասկացան, որ այդ նշանագրերը բավական չեն հայերեն լեզվի սիդորաները - կապերն ամբողջությամբ արտահայտելու համար, - մանավանդ, որ նշանագրերն էլ իսկապես ուրիշ դպրություններից թաղված և հարություն առած հանդիպեցին, - ապա դարձյալ երկրորդ անգամ նույն հոգսի մեջ ընկան և մի ֆանի ժամանակ մի ելք էին փնտրում դրան»³:

Երկու տարի ուսուցանել են, աշխատել, տառապել և նոր միայն հասկացել, մկատել, որ նշանագրերը հայոց լեզվի կապերին, վանկերին, հնչյունական համակարգին չեն համապատասխանում: Այդ էլ քիչ էր, հանկարծ գլխի են ընկել, որ որևէ օտար լեզվի թաղված և հարություն առած նշանագրեր են: Իսկ այդ գրեթե իզուր անցած ապարդյուն ժամանակ վատնած երկու տարվա ուսուցողական գործունեության համար Մաշտոցին արժանացրել են «վարդապետական գեղեցիկ աստիճանին»:

Շարունակեմք խորհել այդ չարաբաստիկ երկու տարվա շուրջը: Ըստ ցայսօր հրապարակի վրա եղած Կորյունի Մատյանի (1841 թ.), դանիելյան գրերը հիմք են ծառայել ստեղծելու մի ամբողջ ուսմունք: Ստեղծվել է այն կարծիքը, որ հայ դպրությունը սկիզբ է առել դանիելյան գրերից, որ առաջին հայագիր դպրոցները բացվել են այդ տառերով ուսուցանելով, որ անգամ Մաշտոցը հայոց գրերը հորինել է դրանց հիման վրա, նույնիսկ հայոց տառերի 36-ից 29-ը դանիելյան են, և Մաշտոցը մնացած 7 ձայնավորների հեղինակն է միայն: Եղել են կարծիքներ նաև, թե դրանք մինչև Մաշտոցյան շրջանի՝ հայկական գրեր են, որ ունեցել են մշտական գործածություն, ասվել է նաև, որ դանիելյան գրեր կոչվածները որևէ օտար լեզվի նշանագրեր են, և այլն, և այլն:

² Տե՛ս Կորյուն, Վարդ Մաշտոցի, Երևան, 1941 թ., էջ 46:

³ Նույն տեղում, էջ 47:

Մ. Օրմանյանը, Հր. Աճառյանը⁴, Էդ. Աղայանը⁵ և այլոք գտնում էին, որ դրանք ինչ-որ օտար լեզվի տառեր են: Մ. Օրմանյանը համարում էր «Դանիելեան ճշմանագրերը, ասորական կամ սեմական աղբիւրէն և բխած»⁶: Համաձայն կարծիքների ունեին Յոզեֆ Մարկվարտը, Անտուան Մեյեմ և այլք: Այս այսպես, բայց իրական պատկերն այլ է: Առաջին իսկ հայացքից մեզանից յուրաքանչյուրս դպրոցական նստարանից զգացել է ահողաշուքունը և անհասկանալիությունը Կորյուցի հետևյալ տողերի. «Էլի խնդրեցին արձայից մատաղահաս մանուկներ, որոնց միջոցով կարողանային ճշմանագրերը գործադրել»⁷: Իսկ առաջին անգամ այդ երբ էին արձայից խնդրել մանուկներ: մինչ այժմ ընդունված բնագրից հնարավոր չէ պատասխանը կռահել:

Այս և նման այլ կարգի հակասություններ նկատելի է Ն. Ակիեյանը և պատրաստել նոր համահավաք տեքստ Կորյուցի Մատյանի և հրատարակել 1947-ին: Նա տարբեր էջեր նու առաջ է բերել, առանձին պարբերություններ փոխադրել տեղից տեղ՝ անհասկանալի հասկանալի դարձնելու նպատակով: Բայց ի վերջո վերջնական արդյունքի չի հասել, առեղծվածները մնացել են: Այս իսկ փաստը դուր չի եկել Հր. Աճառյանին: Վերջինս անթույլատրելի է համարել այդ աստիճանի կամայական վարմունքը դասականների ձեռագրերի հանդեպ:

Բայց ըստ երևույթին ամեն գիտնական ունի իր առաջնությունը, թվացյալ առկա անլուծելի խնդիրը լուծելու համար: Պետք է գար մեկը, որ ամեն ինչ տեղը բերեր: Նման դեպքեր գիտության պատմության մեջ էլի են պատահել: Ջորջիմակ Իրեն Ժոլիո Կյուրիի գիտական ուղեբեգությունը: Դեռ 1938 թվականին նա իմքը փորձ դրեց, ճեղքեց ուրանը և չկռահեց, որ դա հենց ատոմից էներգիայի անջատումն է: Այդպիսի երեք դեպք եղան նրա կյանքում և երեք անգամ էլ զրկվեց Նոբելյան մրցանակից: Ուրիշները կրկնեցին նրա փորձերը և ապացուցեցին, որ դա հենց ուրանի ճեղքումն է, այսինքն՝ ատոմի էներգիայի հայտնությունն է՝ նվաճելով և՛ փառքի դափնիները, և՛ երեք Նոբելյանները:

Սակայն Արտաշես Մաթևոսյանը ոչ թե կրկնեց Ակիեյանին, գնաց նրա բացած ճամփով, բոլորովին ոչ: Նա հերկեց խոսքը և գծեց սեփական ակտը:

Արդ, ո՞րն է Արտաշես Մաթևոսյանի գյուտի իմաստը: Զգալով, տեսնելով առկա բնագրի առանձին հատվածների հակասականությունը, անտրամաբանական լինելը, որը տեղի է տվել թյուրիմացությունների (ոչ միշտ ընկալման), կատարել է հատվածների և առանձին պարբերությունների (ու մասերի) տեղափոխություն: Այսպես, Զ հատվածի 5-րդ և 6-րդ պարբերությունների միջև եղած «Ապա առյալ»-ով սկսվող պարբերությունը տեղափոխում է ժ հատվածի տակ, ժ հատվածի տեղում եղած «Յայն ժամ վաղվադակի» սկսվածով պարբերությունը, բացառությամբ վերջին նախադասության (որով ավարտվում է հատվածը), տեղափոխում է Ժ հատվածի տակ, և արդյունքում ստացվել է այն, որ լուծվել է չարաբաստիկ երկու տարվա հարցը, դրանով իսկ ի չի է դարձվել դանիելյան հորջորջված գրերի գործածության պարագան:

⁴ Տե՛ս Հր. Աճառյան, Հայոց գրերը, Երևան, 1984, էջ 96-110:

⁵ Տե՛ս Էդ. Աղայան, Նախամշտոցյան հայ գրի ու գրականության և հարակից հարցերի մասին, Երևան, 1977:

⁶ Տե՛ս Մ. Օրմանյան, Ազգապատում, հատոր Ա, մասն Ա, Պէրուս, 1959 թ., էջ 279:

⁷ Տե՛ս Արեղյանականում, էջ 45:

Կորյուների քնագրի հատվածների հիշյալ տեղադրմամբ պարզվում է, որ հրք դանիելյան գրեքը բերում են Վաղարշապատ, Արփուների դուռ, Մաշտոցը և Սահակը դրանք ուսումնասիրում են, և անմիջապես աչքի է զարնում այն փաստը, որ դրանք չեն արտացոլում հայոց լեզվի հնչյունական համակարգը, «բավական չեն հայոց լեզվի սիդոքաները-կապերը ամբողջությամբ արտահայտելու համար», այսինքն՝ կապերը, վանկերը հեզելով, գիրկապ անելով կարդալու ենարավորություն չեն տալիս: Եվ ապա «մանավանդ, որ նշանագրերն էլ ուրիշ դպրություններից ֆաղված և հարություն առած հանդիպեցին, ապա դարձյալ երկրորդ անգամ նույն հոգսի մեջ ընկան և մի քանի ժամանակ ելք էին փնտրում դրանք: Հարկ է ընդգծել, որ այս հատվածների տեղափոխությունը մեխանիկական գործ է: Այն ենթադրում է ձեռագրական արվեստի տեխնոլոգիայի տիրապետում, կազմարարական աշխատանքի իմացություն, մագաղաթների էջերի ներագույնս մաքսիմալական հաշվարկ և այլն, և այլն: Այս ամենից հետո նոր Ա. Մաթևոսյանը հանգել է հիշյալ հատվածների վերատեղադրման գաղափարին:

Ա. Մաթևոսյանը կատարել է նաև հետևյալ շտկումը: Կորյուների քնագրում Աբեղյանը կամայականորեն (նրան թվացել է, որ այդպես ճիշտ է) «մանավանդ զի և նշանագիրքն իսկ յայլոց դպրութեանց թաղեալք և հարուցեալք դիպեցան» (մանավանդ, որ նշանագրերն էլ իսկապես ուրիշ դպրություններից ֆաղված և հարություն առած հանդիպեցին) նախադասության մեջ «ֆաղեալք»-ը (ֆաղվածք), դարձրել է «թաղեալք» (թաղված): Եվ Աբեղյանը տալիս է նաև իր արածին լրացուցիչ բացատրություն: Այսինքն՝ ուրիշ լեզուների դպրություններից էին, «ստացված և հետո լույս աշխարհ եկած»⁸: Որ այս այսպես է, անվիճելի է, բայց ինչու ֆաղվածք անել թաղված, երբ իմաստը նույնը չէ: «Թաղված»-ը նախ քննարարյին է, բան տեխնոլոգիան և ապա բացահայտ ցույց է տալիս դանիելյան նշանագրերի ուրիշ դպրություններից ֆաղված, վերցված, խորհնացու արտահայտությամբ հարմարեցված, մուրացված, մուրացած, ողորմածարար խնդրված լինելը:

Արանով չի բավարարվում Ա. Մաթևոսյանը: Բանասիրական ճնշությամբ ապացուցածը ապացուցում է երկրորդ ու երրորդ անգամ. ձեռագրական ու հնագրագիտական ճանապարհներով: Այսինքն՝ իր բանասիրական հայտնագործությունը ստուգում է ձեռագրագիտության ու հնագրագիտության ընծանած ենարավորություններով և ապացուցում բանասիրականի բացարձակ նշմարտացիությունը, այն է՝ կրկնեց, որ դանիելյան գրքի ոչ թե երկու տարվա գործածություններից հետո զգացվեց, թե դրանք պիտանի չեն հայոց լեզվի համար, այլ եենց անմիջապես բերելու ժամանակ:

Արդ, ի՞նչ անել: Հարցը վերստին մնում է քաջ: Ահա այստեղ է, որ Վոսաֆապուտի արքան Մեսրոպին ասում է, որ ինքը ստեղծի հայոց համար տառեր: Եվ երբ նա հորինում է հայոց լեզվի նշանագրերը, մայրաքաղաքում Վոսաֆապուտի արքայի հրամանով քացում են հայագիր առաջին դպրոցը: Երկու տարի շարունակ Մաշտոցը դուրս չի գալիս Վաղարշապատից: Ուսուցանում է Հայաստանի տարբեր մասերից այստեղ բերած ուշիմ մանուկների:

Սա հայոց դպրության արևածագն էր ու առավոտը:

Երբ ամեն ինչ կարգի է գցվում Վաղարշապատում, նոր երկու տարի հետո միայն Մաշտոցը դուրս է գալիս մայրաքաղաքից, շրջում Հայաստանով մեկ, այլ և այլ տեղերում քացում դպրոցներ: Ահա այս գործունեության համար է,

⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 46-47:

այսինքն՝ իր իսկ ստեղծած տառերով ուսուցումը կազմակերպելու համար՝ է և ոչ դանդիկյան գրերով, որ նա արժանանում է «Վարդապետի գեղեցիկ աստիճանին»։ Ա. Մաթևոսյանի հայտնագործության նշանակությունը կայանում է նրանում, որ հայագիր առաջին դպրոցները սկսեցին գործել ոչ թե դանդիկյան, այլ մաշտոցյան տառերով ուսուցմամբ։ Սա հայ պատմության ամենակարևոր դրվագներից է։ Այս պարագայում արդեն ամբողջությամբ և անբեկանելիորեն միայն Մաշտոցին է պատկանում հայոց տառերի հեղինակային իրավունքը։ Այլևս ոչ ոք չի կարող նրա հետ գլուխի հեղինակակցից լինել։ Ու Մաշտոցին է վերագրվում 1600 տարի հետո նրա իրական տառապագին հանճարեղ վաստակը, միայն նրա հանճարի արգասիքը։

Անդրադառնալով մեարդաստեղծ տառերի ինքնատիպությանը և ազգային ավանդներից բխող խնդրին, նա գտնում է, որ Մաշտոցն ուներ իր տառակերտման սեփական սկզբունքը, որը և դրվել է նրա տառաստեղծ գործի հիմքում։ Այս էական գիտական կտվանն է, որ բացառում է Մեսրոպի այլ այբուբեններից տառ որոնելու, մուրալու, նրանց նմանեցնելու գործոցը⁹։

Այսպիսով, ի սկզբանե թույլ տրված անպատեհ մի թյուրիմացության ու վրիպակի վերացմամբ, Կորյունի Մատյանի նորովի հրապարակմամբ, ճշգրտվում է Վաղարշապատի դպրոցի բացման տարեթիվը, դրանով իսկ նաև հայագիր հայոց դպրոցի կազմավորման պատմությունը։ Այն երկու տարին, որ վերագրվում էր իբրև թե դանդիկյան գրերով եղած դպրոցին, արդեն դառնում է որպես Վաղարշապատյան մեարդաստեղծ դպրոցի սկիզբ։

Կորյունի Մատյանի թյուրիմացաբար և անպատեհ տեղերում հայտնված էջերն իրենց տեղը բերելով, մասնավորաբար երրորդ դրվագում (44) - «Ցանձամ վաղվաղակին» հատվածը ճշտվում է Մաշտոցի Վաղարշապատից դուրս առաջին դպրոցները բանալու և հայոց տառերը ուսուցանելու, իր վարդապետությունը ֆարգելու հարցը։ Ինչպես վերը նշվեց, Մաշտոցը երկու տարի Վաղարշապատում ուսուցանելուց հետո, նոր միայն դուրս եկավ շրջելու և Հայոց աշխարհի այլ մասերում իր լուսավորչական գործը սկսելու։ Եվ այդ առաջինը եղավ Գողթը։ Մինչդեռ դանդիկյան գրերի պարագային հենց իր ուսուցչական առաջին գործը Մաշտոցը սկսեց Գողթնից։ Իսկ ճշգրտված տեքստով Մաշտոցի ուսուցչապետությունը ծնունդ է առնում Վաղարշապատից։ Եվ Գողթը արդեն դառնում է երկրորդը, բայց մայրաքաղաքից դուրս՝ առաջինը։ Սա ևս կարևորագույն գործոց է Մաշտոցի կենսագրության տարբեր դրվագների և՛ ուսումնասիրման, և՛ ճշմարտության վերականգնման խնդրում¹⁰։

Կորյունի Մատյանի սույն հրատարակության մեջ գետնի վրա են նաև արեղյանականից զատ նոր ծանոթագրություններ Ա. Մաթևոսյանի կողմից, որոնք վերաբերում են Փարիզյան և Տոնականյան տարբերակներին և շարունակվում են արեղյանական համարակալումից հետո, ասենք՝ 177, հաջորդական համարը՝ 178 և այլն։

Պետք է ասել, որ դրանք ծանոթագրություններ չեն սովորական, սոսկական իմաստով, լինելով փոքր երկտողանոց կամ ընդարձակ՝ գիտական, հետազոտական տիպան աշխատանքի արգասիք։ Եվ ըստ էության մի-մի գիտական հոդվածի հղացում կամ սկզբնավորություն են ներառում իրենց մեջ։ Այդ

⁹ Այս խնդրի շուրջ ավելի համաամառից տե՛ս Ա. Մաթևոսյան, «Ա.-Բ» տառերը, Հայկական սովետական հանրագիտարան, հ. հ. 1-12, Երևան, 1974-1986։

¹⁰ Տե՛ս Կորյուն, նույն տեղում, Հավելված, էջ 172։

ծանոթագրությունները հշտրտում են քննադատին տեխտեր, թարգմանական հշտրտումներ, ընդ որում խստագույնս նրբերանգային, որից և կախված է նախադասության կամ քառյակաստի հշտրտ ընկալումը և այլն, և այլն: Գիտական առանձնահատուկ արժեք ունեն Մ. Խորենացու «Հայոց պատմության» մեջ Մաշտոցին վերաբերող մասում արված հշտրտումները, որ կատարվել են Կորյունի միջոցով¹¹:

Այսպիսով, «Վարդ Մեսրոպ Մաշտոցի» երկի սույն հրատարակության բոլորեքյան գիտական, պատմական արժեքը կայանում է նրանում, որ այլ և այլ արձանիքներից զատ, այն ընթերցողի սեղանին է դրվել իր ամենամախտակգրական վիճակում, ինչպես գրվել է ի ձեռն նրա հեղինակի՝ Կորյունի:

Այժմ մի քանի խոսք «Հայաստան» հրատարակչությանը:

Դիմելով ընթերցողին ու լայն հասարակայնությանը, հրատարակչությունը ազդարարում է, թե սիրով կընդունվեն «անշահախնդիր նկատողությունները և առաջարկությունները»: Ցանկանում ենք որոշմամբ արագ օգտվել այդ քարյացականությունից:

Նախ, որ իր հոգակաբար «Հայաստանը» հայտնում է, թե հետախուս սույն մատենաշարով հրատարակվելիք գրքերը լույս կընծայվեն միայն աշխարհաբարով: Մեր կարծիքով, պետք է շարունակել արդեն ավանդույթ դարձած կարգը, գրաբար և աշխարհաբար տեխտերը միասին: Ճիշտ է, դա շատ ծախսերի հետ է կապված, գրեթե դառնում է կրկնակի տպագրություն, բայց դրա օգտակարությունը շատ ավելին է, քան նյութական ծախսը:

Հազիվ առիթ է եղել առանց կաշկանդումների, առանց բռնադատման հրապարակ բերել ազգային հոգևոր գանձերը: Ուրեմն նախ այս պարագան պարտադրում է, որ հրատարակվեն և քննադարձ: Եվ ապա թե, սա առիթ է, որ ընթերցողը շփվի գրաբարի հետ, ստիպված «պատահաբար» սովորի գրաբարը, կամ գտնի ինչ-որ չափով տեղեկանա գրաբարյան լեզվական իրողություններին:

Մի առաջարկ ևս: 1941-ին Արեղյանը Կորյունի Մատյանը հրապարակ բերեց գրաբար և աշխարհաբար տեխտերը միասին, և գրքի մի էջին գրաբար բնագիրն էր, հաջորդին՝ թարգմանությունը: Սա դարձավ ավանդույթ և դաս մեր մատենագրության հետագա հրատարակչներին՝ ի մասնավորի նրևանի պետական համալսարանի համար: «Հայաստանը» քննարկը և թարգմանությունը նույն գրքում ներկայացրել է լուսնածին-առանձին: Այս պարագան դժվարություն է հարուցում օգտագործման ժամանակ: Չէ՞ որ կան տարբեր աստիճանի պատրաստվածություն ունեցող ընթերցողներ, որոնք ցանկության զեպում հեշտությամբ անմիջապես կդիմեն քննարկին, այսինքն՝ կողմի էջին: Իսկ ներկա դեպքում պետք է արդեն բավականին փնտրտուքի մեջ ընկնել: Սա կթվա տեխնիկական հարց, բայց ոչ, կարևոր է: Այդպես կարող է թվալ առաջին հայացքից: Այնպես, որ չնայած «Հայաստանը» հրաժարվում է հետախուս քննարկի հրատարակչությունից, սակայն գտնում ենք, որ այն պետք է: Թեև այն կապված է մեծ ծախսերի հետ, բայց այդ ե՞րբ է եղել, որ մեր կյանքը դժվարին չի եղել: Եվ այդ ե՞րբ է եղել, որ դժվարագույն պահերին անգամ հայ մշակույթը ծաղկափթթություններ չի տվել: Հետևապես, գործը պետք է անել կատարյալ: Չէ՞ որ սա այնպիսի ձեռնարկ է, որ մի սերնդի գործը չէ: Շեշտում ենք վերստին, թող

¹¹ Այս մասին ավելի համազամանակից տե՛ս Ա. Մաթևոսյան, Մովսես Խորենացու մտադրյալ գործի մասին, Պատմա-քննադրական հանդես, 1990, էջ 100-117:

կատարյալով սկսվի, իսկ եկող սերունդները, հաջորդները շնորհակալությամբ կշարունակեն:

Կարևոր ենք համարում նաև հետևյալը: Դա թարգմանության խնդիրն է: Եթե վերցնենք մեր մատենագրությունը ամբողջական ծավալով, ապա թե համաշխարհային հասարակայնությունը անտեղյակ է դրան: Ուստի լավ կլինի, որ «Հայաստանը» պարբերաբար սկսի նաև թարգմանության գործը: Պարզապես իր համակարգում ստեղծի միայն այս նպատակի համար բաժին: Մանավանդ որ այս հսկայածավալ գրական, պատմական, տոմարագիտական, ծիսական, ազգագրական, քանդակապետական այլևայլ բնույթի Մատյաններում, մեր «Հայտնավորենք», «Ճաշոցներում», «Մաշտոցներում», «Տոնականներում» և այլուր, դրսևորված են նաև մեր հին աշխարհայացքը, մեր նախնյաց գիցարանական պատկերացումները, մեր երաժշտությունն ու ազգային դիմագիծը: Իսկ այսօր այդ ամենը միայն մերը չէ, համուր մարդկային մշակույթի բաղկացուցիչ մասն է:

Աշխարհի գիտնականները մարդկության առավուր, մարդ կոչվածի հին աշխարհընկալումները հետազոտելու համար դիմում են, այսպես կոչված, գիտության մեջ ընդունված տերմինով ասած, տրադիցիոն, ավանդապահ ժողովուրդների, այն է՝ հյուսիսի ժողովուրդների՝ չուկչաների, էսկիմոսների և մյուսների, Ավստրալիայի ու Ամերիկայի բնիկների ազգագրության, առասպելաբանության ուսումնասիրությամբ: Դիմում են անգամ Հ. Լոնգֆելլոյի «Հայավաթի երգին» և միաժամանակ տարակուսում, քանի որ այնուամենայնիվ Լոնգֆելլոն ստեղծագործող էր, գրող էր և դե արդի ու որոշի, թե որտեղ է իրական փաստը, որտեղ՝ երևակայականը: Իսկ այս ամենի դիմաց ձեռագրերում ճիշտում է հայկական անխառն ու անաղարտ նյութը:

Եվ թվում է, որ թարգմանական գործը պետք է սկսել հենց Կորյունի երկից: Ինչու՞: Երևանի Պետական համալսարանի հայագիտական կենտրոնը 1981-ին Կորյունի երկը /աքեղյանական հրատարակությունը/ լույս է ընծայել գրաբար և աշխարհաբար տեքստերի հետ, նաև ռուսերեն և անգլերեն թարգմանությունները: Արդ, ինչ է մնում անել: Հարկավոր է թարգմանությունների էջերը վերադասավորել ըստ Ա. Մաթևոսյանի առաջարկի և թարգմանել արդեն միայն «Հավելվածը»: Եվ կունենանք արդեն «Պարբ. Մեսրոպ Մաշտոցի» Մատյանը ռուսերեն և անգլերեն լեզուներով: Կամ, եթե այս էլ հնարավոր չէ, գոնե «Հավելվածը» լույս ընծայել ռուսերեն և անգլերեն լեզուներով:

Իսկ եթե հայոց մատենագիրներից բացի, ձեռնարկենք մեր ազգագրական կուտակված նյութի թարգմանությանը, դա արդեն կցցի աշխարհը: Դրանք են մեր անցյալի Մեծերի, թող օրինյալ լինի նրանց հիշատակը, Սարգիս Հայկունու, Գարեգին Սրվանձոտյանի, Մկրտիչ Էմինի, Գարեգին Հովսեփյանի, Մանուկ Աբեղյանի, Երվանդ Լալայանի և այլոց հրապարակած և անտիպ հավաքածուները, թողունները, Հնագիտության և ազգագրության ինստիտուտի ներկա հրապարակումները: Սա, իհարկե, հսկայական ծախսեր պահանջող գործ է, բայց ոչինչ աշխարհում միանգամից չի կայացել: Ամերածեշտ է սկսել և սկսել առաջին կես ֆալլից, հաջորդ սերունդները կշարունակեն, թող տևի անգամ մեկ-երկու հարյուր տարի:

Խոսենք նաև ճշգրտություն պահանջող մի պարագայի վերաբերյալ: «Հայաստանը» իր հույկագրում ազդարարում է, թե 2001 թվականին լրանում է Հայաստանում ֆրիստոնությունը պետական կրոն ընդունելու 1700-ամյակը և 2005 թ.՝ հայ գրի ու դպրության 1600-ամյակը, և որ «Հայոց մատենագիրներ» շարքը նվիրվում է համազգային սրբազան երկու հոբելյաններին: Սակայն սույն

մատենաշարի առաջնեկի՝ Կորյունի «Վարժ Մեսրոպ Մաշտոցի» երկի անվանաթերթի ծախ կողմի մաքուր էջին սևով սպիտակի վրա գրված է. թե «Մատենաշարը ճկիրվում է Հայաստանում քրիստոնեության ընդունման 1700-ամյակին»։ Այսինքն՝ շեշտվել է միայն մեկը։ Հաջորդ հատորների լույսընծայման պարագային հարկ է այս հակասությունը վերացնել։

... Տարիներ առաջ էր, մի ձեռագրի առիթով գնացել էի Մատենադարան։ Հարցրի Արտաշես Մաթևոսյանին։ Ասացին՝ իջել է ձեռագրապահոց։ Գնացի։ Այնտեղ էր և Երևելի հայագետ, բյուզանդագետ, ձեռագրագետ, արվեստաբան, դոկտոր-պրոֆեսոր Սիրարփի Տեր-Ներսեսյանը։ Նա, խորասուզված ձեռագրերի աշխարհում, փնտրումների մեջ էր։ Հետո դիմեց Արտաշեսին, ինչ-որ բան հարցրեց։ Արտաշեսը վերցրեց ձեռագիրը, նայե՛ց, նայե՛ց, քննախույզ թերթեց, կարդաց, ապա պատասխանեց։ Սիրարփին լռեց, ընկավ մտածումների մեջ, ըստ երևույթին նրա պատասխանը լիովին գոհացրել էր, ապա վրա բերեց.

«Պարոն Արտաշես, Դուք գիրը լավ կնանչեմ, գրադվե՛ք հայոց գիրերով»։ Այո՛, լավ նաեւ չե՛լ... Արդյո՞ք Սիրարփին ցկատի ուներ տառը նաեւ չելու, տեսնելու սոսկական իմաստը, տեսողականի, նաեւ չաղակա՛նի լոկ ֆիզիկա՛ն։ Օ՛, ո՛չ... Նա ցկատի ուներ էականը, այն, որ Արտաշեսը ի վերուստ կոչումն ունի իրերը, երևույթները, տվյալ դեպքում ձեռագիր Մատյանները Մեսրոպական ՏԱՌԵՐԻ խորհով տեսնելու, նրանց մեջ ներթափանցելու, վերլուծելու և նոր հզորահանգում անելու կարողությունը։

Եվ իրոք, Արտաշեսն ասես խոսում է, գրուցում ձեռագրերի հետ, յուրաքանչյուրի հետ առանձին-առանձին, և նրանք էլ մի տեսակ կարծես յուրովի ընկալում, հասկանում են Արտաշեսին, ու հայտնվում է փոխադարձ հաղորդակցության աստվածային ակնթարթը։ Իսկ եթե բանաձևենք, դա կլինի նաև, բնատուր ձիրքից գտա, տարիների փորձ, հմտություն։ Եվ իզուր չէր մեծ հայագետի՝ Սիրարփի Տեր-Ներսեսյանի դիտարկումը։ Ա. Մաթևոսյանը ստեղծեց նաև Մաշտոցի տառերի ծագումնաբանությամբ վերաբերող, նրա տառակերտման իր տեսությունը, որ տեղ գտավ հայկական հանրագիտարանի հատորներում։

Շարունակեմք։ Այս ամենը և այն պարագան, որ նա նաև երկու տասնյակ և ավելի տարիներ «Ձեռագրագիտություն» նախկին և դասավանդում էջմիածնի Մայր Աթոռի Հոգևոր Ճեմարանում, ապա պետք է նրանից, ինչպես մեծ Պարույրը կասեր, պահանջելով խնդրել, խնդրելով պահանջել, որ գրի դպրոցական և բուհական դասագիրք, ձեռնարկ՝ ձեռագրագիտության վերաբերյալ։ Բացի այդ, գրի գրքեր, կամ գոնե գիտական հոդվածների տեսքով հաղորդել ձեռագրագիտական մարզի իր հարուստ փորձը այս կամ այն հարցի շուրջ՝ թողնելով ի դասն սերունդներին...